

ՀՈԴՎԱԾՆԵՐ

ՑԻՎԻԼԻԱՐԽԻԱՅԻ ԳԱՐԱՇՐՁԱՆԸ

Ա. Ս. ԱԼԵՔՍԱՆՅԱՆ

Մասնագիտական գրականության մեջ, կապված նոր աշխարհաքաղաքական փոփոխությունների ու փոխակերպումների հետ, կրկին անգամ հրատապ են դառնում հնարավոր նոր քաղաքական ուժերի, համակարգերի ու քաղաքական իշխանության լեգիտիմության տարատեսակների գործառնության հիմնահարցերը: Այդ մասին են վկայում նաև Քաղաքական գիտությունների միջազգային ասոցիացիայի կողմից 1994 թ. Բեռլինում և 1997 թ. Սեուլում անցկացված XVI-րդ և XVII-րդ միջազգային գիտաժողովները:

Այդ իսկ պատճառով ժամանակակից քաղաքագիտական տեսությունների մեջ, եթե ոչ հիմնական, ապա գոնե կենտրոնական հիմնահարցերից մեկը ազգ-պետությունների, նրանց ազգային առանձնահատկությունների, ինքնության և վերազգային փոխհարաբերության ու փոխազդեցության հնարավոր մոդելների հետազոտությունն է:

Քաղաքագիտության մեջ գոյություն ունեցող ավանդական քաղաքական ուժերի ու քաղաքական իշխանության լեգիտիմության տարատեսակների կողքին ի հայտ են գալիս որակապես նոր տարատեսակներ, որոնց թվին կարելի է դասել նաև ցիվիլիարխիան:

Փորձենք սահմանել ցիվիլիարխիայի էությունը, նրա հիմնական պարամետրերը, կառուցվածքը, բաղկացուցիչ տարրերն ու սկզբունքները, որոնք, ինչ խոսք, հնարավոր չէ սպառել ներկայացվող աշխատանքի շրջանակներում:

Արդի ժամանակաշրջանում տեղի ունեցած համաշխարհային առաջընթացը, մոդեռնիզացիան, գլոբալիզացիան նոր խնդիրներ ու հիմնահարցեր են առաջադրում տարբեր ազգային համակարգերի ենթամակարդակներում:

Այս առումով համաշխարհային քաղաքակրթությունը ինքնահաստատման դժվար ու բարդ ճանապարհ է անցել: Տեղի ունեցած մի շարք քաղաքացիական պատերազմները, հեղափոխությունները ու համաշխարհային երկու պատերազմները, ինչպես նաև սկիզբ առած ազգային (ինքնության) կոնֆլիկտները նոր առանձնահատուկ իմաստ և որակ են հաղորդում համաշխարհային հասարակական հարաբերությունների համակարգին:

Ամերիկացի հայտնի քաղաքագետ Ռ. Դալը, վերլուծելով դեմոկրատիզացիայի գործընթացը քաղաք-պետություններից ազգ-պետություններին անցման ընթացքում, գտնում է, որ վերջինս հանգեցնում է «կարևոր հետևանքների ինչպես պրակտիկ, այնպես էլ տեսական բնույթի»:

Սովորաբար ազգ-պետությունների քաղաքական համակարգերի գործառնությունը ձևավորում է այնպիսի ուժեր, որոնք կազմավորում են ինքնատիպ ազգիշխանություն կամ նացիոնալիզմի: Վերջիններս, չնայած իրենց առանձնահատկություններին, կարիք են զգում ցիվիլիզացիայի որոշակի համընդհանուր սկզբունքների ու մեխանիզմների: Ինչպես ցանկացած քաղաքական ուժեր, ցիվիլիզացիան նույնպես կարող է դիտարկվել մի շարք ենթամակարդակներով. առաջին հերթին ցիվիլիզացիան հանդես է գալիս որպես քաղաքական ուժերի տարատեսակ:

Ինչպես պոլիարխիան, այնպես էլ ցիվիլիզացիան ժամանակակից պետությունների կառավարման առանձնահատուկ ուժերի տարր է: Սակայն, ի տարբերություն մյուս քաղաքական ուժերի, ցիվիլիզացիան քողարկված ձևով ամրագրված է որոշ քաղաքական ուժերի հիմքում: Դեռ ավելին՝ Ռ. Դալի կողմից սահմանված պոլիարխիայի շորս հիմնարար սոցիալ-քաղաքական գործընթացները² որոշակի վերապահումներով բավարարում են նաև ցիվիլիզացիային:

Այս առումով տեղին է թերևս ընդգծել, որ այստեղ «լիզենցիայ» տերմինի փոխարեն նշված սոցիալ-քաղաքական գործընթացների մեջ կարելի է մտցնել «ազգ-պետություններ» և «քաղաքացիական հասարակություններ» տերմինները:

Հարկ է նշել նաև, որ վերջիններս առաջինի հետ միասին լիովին համապատասխանում են ցիվիլիզացիայի ամբողջական համակարգը կազմող սոցիալ-քաղաքական գործընթացներին: Այստեղ ցիվիլիզացիան ցույց է տալիս, թե համընդհանուր քաղաքակրթության զարգացման որ մակարդակին է համապատասխանում ազգ-պետությունում գործառնող քաղաքական ուժեր:

Ցիվիլիզացիան ենթադրում է սոցիալ-քաղաքական կառույցներում և գործընթացներում համընդհանուր քաղաքակրթության վերահսկողության տարածում ու ավելացում: Այն նույնիսկ ձևավորվում է անկախ այս կամ այն հասարակության քաղաքական համակարգից, քանի որ գործառնում է ինքնուրույնաբար և տարերայնորեն:

Այլ խնդիր է, թե ինչպիսի դրսևորում և ինչպիսի մակարդակներով է (ղբրական կամ բացասական) ազդեցություն ունենում: Այստեղ տեղին է ընդգրծել ցիվիլիզացիայի տարրերի անխուսափելիությունը՝ որպես վերջինիս սոցիալ-քաղաքական գործընթացների բնորոշ գիծ և հիմնական հատկություն: Նրա շնորհիվ ոչ թե նվազում են դեմոկրատիայի, պոլիարխիայի սոցիալ-քաղաքական գործընթացների ֆունկցիաները, այլև ընդլայնվում ու փոխակերպվում են վերահսկողության ձևերը:

Եթե, ըստ Ռ. Դարենդորֆի, «գոյություն ունի քաղաքակիրթ գոյության վերին ու ներքին սահման», իսկ սոցիալական պետության նպատակը «բոլոր քաղաքացիներին քաղաքակիրթ գոյության միևնույն մակարդակի երաշխեքն է»³, ապա այդ ամենը կարող է իրականություն դառնալ միայն ցիվիլիզացիայի սոցիալ-քաղաքական գործընթացների համակարգում: Այս առումով ցիվիլիզացիան նպատակաուղղված է ապահովելու ազգ-պետության քաղաքակիրթ գոյության առնվազն ներքին սահմանը, քանի որ «այդ սահմաններով գծագրվում է բոլորի համար երաշխավորված իրավունքների տարածությունը»⁴:

² Տե՛ս նույն տեղը, էջ 38:

³ Р. Дарендорф, От социального государства к цивилизованному сообществу, жур. «Полис», М., 1993, № 5, с. 31—34.

⁴ Նույն տեղը, էջ 31:

Եթե փորձենք տալ «ցիվիլիարխիա» հասկացութեան սահմանումը, ապա կարող ենք ասել, որ ցիվիլիարխիան համաշխարհային հասարակութեան քաղաքական համակարգի այնպիսի գործառնութեան ձև է, որը փորձում է ազգ-պետութեան մեջ դեմոկրատական մեխանիզմների միջոցով ամրապնդել, հաղթահարել և զարգացնել քաղաքակիրթ գոյութեան ստորին և վերին սահմանները՝ այդպիսով ստեղծելով անհրաժեշտ նախադրյալներ քաղաքացիական հասարակութեան ձևավորման համար:

Եթե պոլիարխիան ազգ-պետութեան դեմոկրատիզացիայի արգասիքն է, ապա ցիվիլիարխիան վերջինիս պատճառն է: Այս առումով պոլիարխիան ցիվիլիարխիայի տարատեսակն է՝ որպես վերջինիս բաղկացուցիչ տարր:

Միայն ցիվիլիարխիայի շրջանակներում կարող է գործառնել դեմոկրատիայի, պոլիարխիայի ինստիտուտների ամբողջական համակարգը, քանի որ առաջինը վերջինիս սահմանափակվածութեան հաղթահարումն է, իսկ պոլիարխիան՝ ցիվիլիարխիայի ունիվերսալ սկզբունքը: Նրանք գտնվում են դիալեկտիկական միասնութեան մեջ:

Ի. Դալի կողմից տրված պոլիարխիայի հինգ հիմնավորումները բավարարում են նաև ցիվիլիարխիային, որոնցից մի քանիսի մասին արդեն խոսվեց վերևում:

Եթե պոլիարխիան «քաղաքական ինստիտուտների ուղղվածութեանն է, անհրաժեշտ այն բանի համար, որպեսզի բավարար չափով ապահովեն համապատասխանութեանը դեմոկրատական պրոցեսին», ապա ցիվիլիարխիան նաև հոգևոր, սոցիալական, տնտեսական ինստիտուտների ուղղվածութեանն է: Մյուս կողմից, եթե պոլիարխիան «քաղաքական վերահսկողութեան համակարգ է»⁵, ապա ցիվիլիարխիան՝ ոչ միայն քաղաքական:

Ինչպես պոլիարխիան, այնպես էլ ցիվիլիարխիան իրավունքների համակարգ է, որտեղ «սովորական իրավունքները ինստիտուցիոնալորեն երաշխավորված ու պաշտպանված են»⁶:

Այս իմաստով ցիվիլիարխիան նաև քաղաքական համակարգի տարր է, գաղափարախոսութեան, մոդել, մտածողութեան և այլն:

Ժամանակակից աշխարհում ձևավորվում է այնպիսի փոխհարաբերութեանների համակարգ, որտեղ յուրաքանչյուր ազգ-պետութեան քաղաքական ռեժիմ որոշակի ազդեցութեան է ունենում մյուսների վրա: Այն մի կողմից պայմանավորված է համակարգային ամբողջութեան մաս կազմող տարրերի անհրաժեշտ փոխազդեցութեամբ, իսկ մյուս կողմից՝ տարրերի որոշակի հարաբերական ինքնուրույնութեամբ:

Ընդ որում, նմանատիպ փոխազդեցութեաններն անխուսափելի են և անհրաժեշտ ամբողջական համակարգի գործառնութեան, զարգացման ու վերարտադրութեան համար: Այստեղ կարևոր է տարբերակել ցիվիլիարխիայի ձևավորման առանձնահատուկ մեխանիզմներն ու եղանակները, քանի որ նախևառաջ ցիվիլիարխիան ժամանակակից քաղաքակիրթ համաշխարհային քաղաքացիական հասարակութեան գործառնութեան ձև է: Այն միտում է ձևավորելու մոդեռնիզացված ու ճկուն սոցիալ-տնտեսական, քաղաքական, հոգևոր նախադրյալներ համընդհանուր քաղաքակրթութեան, համաշխարհային քաղաքացիական հասարակութեան կայացման համար: Միաժամանակ ձգտելով ապահովել, կատարելագործել գոյութեան ունեցող ազգային համակարգերը համընդհանուրի շրջանակներում, այն հանդես է գալիս նաև որպես համընդհանուր և ունիվերսալ քաղաքական ռեժիմի արտահայտութեան:

⁵ Տե՛ս նույն տեղը, էջ 40:

⁶ Տե՛ս նույն տեղը:

Ինչ խոսք, սոցիալ-քաղաքական գործընթացների համակարգում այն ունի ինչպես դրական, այնպես էլ բացասական միտումներ:

Մարդկության զարգացման բնապատմական գործընթացում ձևավորվել են մի քանի քաղաքակրթության մակարդակներ, ինչպես նաև միջազգային մի շարք ինստիտուտներ, որոնք միջնորդավորված են տարբեր ազգային քաղաքակրթությունների արժեքային համակարգերով: Նրանցից յուրաքանչյուրը փորձում է ազգային շրջանակներում կայացնել վերազգայինը՝ և՛ ընդհակառակը: Այսպես օրինակ՝ ՄԱԿ-ի ձևավորումը, նրա կանոնադրությունն ու գործունեության մեխանիզմները, ինչպես նաև ընդունված փաստաթղթերն ու որոշումները, որոնք միջնորդավորված են անդամ պետությունների ազգային և վերազգային շահերով, առանձնահատուկ և համընդհանուր շահանքներով:

Կամ էլ Եվրախորհրդարանի ու Եվրամիության ձևավորման պատճառները, ինչպես նաև վերջիններիս փոխազդեցությունը աշխարհաքաղաքական մակարդակներում: Այստեղ խոսքը ցիվիլիարխիայի քաղաքական ուժերի տարրերի սուբստանցիոնալ և օբյեկտիվ նշանակության մասին է: Այն հանդես է գալիս և՛ որպես ինտեգրացիա, և՛ որպես դիֆերենցացիա ազգային քաղաքակրթությունների միջև, որն էլ իր հերթին կարևորում է վերջինիս անխուսափելիությունը:

Այսպիսով, ելնելով քաղաքագիտական գրականության մեջ առկա պատկերացումներից, կարելի է հանգել այն եզրակացության, որ ներկայումս գնալով ուժեղանում է տարբեր երկրների քաղաքական ուժերի փոխազդեցության գործընթացը:

Այսինքն՝ ձևավորվում են այնպիսի սոցիալ-քաղաքական գործընթացների ամբողջական փոխհարաբերությունների համակարգեր, որտեղ քաղաքական ուժերն ոչ միայն պարզապես վերահսկում, այլ առավել ժողովրդավարականները փորձում են ուղղություն տալ ոչ ժողովրդավարական ուժերին: Ընդ որում, այդ գործընթացները շեն կարող դուրս գալ քաղաքակիրթ մեխանիզմների սահմաններից:

Ցիվիլիարխիան՝ որպես քաղաքական ուժերի դրսևորում տնտեսական, հոգևոր, սոցիալ-քաղաքական գործընթացների ամբողջություն է, որտեղ ապահովվում է վերոհիշյալ մեխանիզմների գործառնությունը: Այն անընդհատ փորձում է ապահովել քաղաքակրթության առաջընթացն ու զարգացումը և հանդես է գալիս մի կողմից իբրև հումանիտարականի, համամարդկայինի ու ազգայինի փոխադարձ պայմանավորվածության անհրաժեշտ ու բավարար պայման, իսկ մյուս կողմից՝ ազգ-պետությունների համակարգում քաղաքացիական հասարակության զարգացման նոր մոդել:

Եթե ցիվիլիարխիայի սկզբունքներից առաջինը ազգայինն է՝ որպես ինքնատիպ կամ առանձնահատուկ ինքնություն, ապա երկրորդը՝ վերազգայինն է՝ որպես համընդհանուրի, որոնք գտնվում են դիալեկտիկական միասնության մեջ:

Այս իմաստով թերևս կարելի է պնդել, որ ցիվիլիարխիան ոչ այնքան ժամանակակից, որքան ապագայի քաղաքական ինստիտուտ է, որի ամբողջական գործառնությամբ էլ պայմանավորված կլինի համընդհանուր քաղաքակրթության աստիճանին անցման ու զարգացման առավել բարդ ու դժվարին գործընթացը:

Անհրաժեշտ է նաև տարբերակել ցիվիլիարխիայի դրական և բացասական մակարդակները, որոնք, ինչ խոսք, պայմանավորված են որոշակի սոցիալ-քաղաքական գործընթացներով:

Ժամանակակից աշխարհում ձևավորված են միջազգային ինստիտուցիոնալ մի շարք համակարգեր (ՄԱԿ-ը, Եվրոխորհուրդը, Հյուսիս-Ատլանտյան

ոազմական դաշինքը և այլն), որոնք անընդհատ առաջադրում են որոշակի շահափանհիշներ և որոնք անհրաժեշտ են և նույնիսկ պարտադիր բոլոր անդամ-երկրների համար, իսկ այլոց անդամակցության դեպքում դրանք դառնում են անհրաժեշտ ու բավարար պայման:

Այսպիսով ձևավորվում է ցիվիլիարխիայի համընդհանուր և ունիվերսալ սկզբունքը, որին փորձում են համապատասխանել ազգ-պետության քաղաքական ոեծիմն ու համակարգը: Այսինքն՝ ազգային ինքնությունն ու արժեքային համակարգը պետք է ոչ միայն բխեն ցիվիլիարխիայից, այլև ապահովեն այդ սկզբունքների հավասարակշռված գոյությունն ու գործառնությունը:

Այստեղ խոսք կարող է լինել նաև նեոցիվիլիարխիայի մասին, որն, ըստ էության, կարիք է զգում հանգամանալից հետազոտման ու քննարկման:

Յուրաքանչյուր ժողովուրդ, յուրաքանչյուր էթնո-մշակութային հանրույթ ունի իր ձևավորման ու զարգացման առանձնահատկությունները, որոնք արդյունք են որոշակի կոնկրետ սոցիալ-տնտեսական, պատմաքաղաքական և այլ իրավիճակների:

Այն նախադրյալները, որոնք կարևոր ու վճռորոշ նշանակություն են ունեցել մի ժողովրդի համար, մյուսի համար ունեցել են կործանարար ու բացասական նշանակություն: Ինչ խոսք, նույնիսկ աշխարհի ամենաքաղաքակիրթ ժողովուրդների համար «տրադիցիոն» հասարակության և զարգացման ազգային համակարգերին վերադառնալը հանդես եկավ որպես հավասարակշռված առաջընթացի ու ժողովրդավարության կայացման անհրաժեշտ պայման: Այստեղ տեղին է անդրադառնալ Վ. Մասլովի այն մտքին, որի համաձայն «յուրաքանչյուր զարգացման մոդել, որպեսզի լինի իրական, պետք է լինի ազգային»⁷: Այս տեսանկյունից ազգ-պետությունների բարդ կառուցվածքային-գործառնական համակարգերի զարգացման համար հասարակական կյանքի տարբեր ենթամակարդակներում անհրաժեշտ են առանձնահատուկ մոդելներ (ազգային գաղափարախոսության, պետության և քաղաքացիական հասարակության և այլն): Այլ կերպ ասած՝ յուրաքանչյուր ժողովրդի համար կարևորվում է զարգացման ազգային, ինքնատիպ մոդելը, որտեղ, օրինակ, մասնագիտական գրականության մեջ ընդունված դեմոկրատական լեզվաբանությունը կարող է դուրս գալ իր «դասական» շրջանակներից: Այսինքն՝ քաղաքական իշխանության համար առավել բնորոշ կդառնա ազգային լեզվաբանությունը որպես լեզվաբանության նոր տարատեսակ, որն, ինչ խոսք, կդառնա պետական իշխանության սահմանադրական իրականացման սահմանն ու կարգը:

Ժամանակակից պայմաններում, ցիվիլիարխիայի շրջանակներում քաղաքական իշխանության ազգային լեզվաբանությունն ստանում է նոր իմաստ ու բովանդակություն: Քանզի ցիվիլիարխիան հանդես է գալիս որպես այնպիսի ինստիտուտ, որտեղ դրսևորվում է ազգայինի պատրաստակամությունը պահպանելու, տեր կանգնելու հումանիզմի գաղափարներին ու համընդհանուր քաղաքակրթության արժեքներին: Այն մի նոր միտում է՝ հաղթահարելու համընդհանուր քաղաքակրթության սահմանափակվածությունը, ինչպես նաև՝ դուրս գալու ազգայինի և վերազգայինի շրջանակներից՝ փորձելով ապահովել վերջիններիս դիալեկտիկական միասնությունը: Այս առումով ցիվիլիարխիան հանդես է գալիս որպես ազգային քաղաքացիական հասարակության զարգացման սահմանային իրավիճակ: Այն հավասարակշռված այնպի-

⁷ В. И. Маслов, Россия: поиск пути и проблема политического выбора, в журн. «Вестн. Моск. Ун-та, сер. 12, полит. науки», М., 1997, № 1, с. 67.

սի համակարգ է, որտեղ օբյեկտիվ ու սուբստանցիոնալ ձևով արտահայտված է մարդը որպես քաղաքացի և ազգի ներկայացուցիչ: Յիվիլիարխիայի շնորհիվ է, որ մի կողմից հասարակության զարգացումը ուղեկցվում է որոշակի սահմանային իրավիճակներով, իսկ մյուս կողմից հենց այդպիսի փոփոխություններով են ձևավորվում սոցիալ-քաղաքական կառույցները, ինֆրաստրուկտուրաների դինամիզմը, մոբիլությունը, օբյեկտիվ քաղաքական իմունիտետը և այլն: Այս ամենը հիմք է տալիս պնդելու, որ ցիվիլիարխիան համաշխարհային քաղաքացիական հասարակության նախադրյալների ձևավորման սոցիալ-քաղաքական, տնտեսական, հոգևոր համակարգերի գործառնության ձև է: Չէ՞ որ արդի ժամանակաշրջանում ձևավորված քաղաքակրթության ունիվերսալիզմը նոր պահանջներ ու շահանիշներ է առաջադրում: Այսպես օրինակ՝ գոյություն ունեն մարդու իրավունքների համընդհանուր դեկլարացիան, մարդու տնտեսական, սոցիո-մշակութային, քաղաքական, քաղաքացիական և այլ իրավունքների մասին միջազգային պայմանագրերը⁸, որոնք իրենց արտացոլումն են ստանում տարբեր երկրների սահմանադրական, օրենսդրական ակտերի մեջ: Ընդ որում, բացի միջազգային իրավունքի ոլորտներից, կան նաև այլ ոլորտներ, որոնց ամրագրվածության և օբյեկտիվության աստիճանը կարևոր նշանակություն ունի այս կամ այն միջազգային կազմակերպությանը տվյալ երկրի անդամակցության համար: Մյուս կողմից՝ միջազգային կազմակերպություններն իրենց հերթին նախաձեռնություն են դրսևորում օժանդակելու որևէ երկրում համընդհանուր քաղաքակրթության նորմերի ամրագրման նախադրյալների ձևավորմանը: Այս իմաստով տեղի է ունենում ազգպետության որոշակի սկզբունքների համապատասխանեցում կամ համադրում միջազգային իրավունքի նորմերին՝ առաջարկելով, օրինակ, ժողովրդավարության զարգացման մոդելներ ու մեխանիզմներ և այլն: Այլ կերպ ասած՝ տեղի է ունենում քաղաքակրթության համընդհանրականության համադրում ազգային առանձնահատկություններին: Այս պարագայում, եթե վերջինիս շընորհիվ առաջինը ձեռք է բերում զարգացման առավել բարձր մակարդակ, ապա մենք գործ ունենք ցիվիլիարխիայի դրական կողմի կամ, այլ կերպ ասած, բուն ցիվիլիարխիայի հետ, իսկ եթե հակառակն է, ապա՝ ցիվիլիարխիայի բացասական կողմի կամ անտիցիվիլիարխիայի հետ:

Ժամանակակից համաշխարհային քաղաքակրթության պայմաններում ձևավորում են այնպիսի օրինաչափություններ, որոնց համաձայն այսպես կոչված «ոչժողովրդավարական» երկրներում սկիզբ են առնում ժողովրդավարական ինստիտուտների, քաղաքացիական հասարակությունների, իրավական ու սոցիալական պետությունների ձևավորման գործընթացները: Գործընթացներ, որոնք միջազգային հանրության կարծիքի ներքո ձեռք են բերում հրատապ նշանակություն ազգերի ու ժողովուրդների առավել քաղաքակրթ ձևերով ինքնակազմակերպման ու ինքնակառավարման տեսանկյունից: Նույնիսկ քաղաքական իշխանությունն ստանում է ոչ միայն ազգային լեգիտիմություն (դեմոկրատական), այլև միջազգային, վերազգային կամ էլ, այսպես կոչված, ցիվիլիարխիկ լեգիտիմություն: Ընդ որում, արդի աշխարհաքաղաքական պայմաններում երկուսն էլ անհրաժեշտ ու բավարար պայման են կոնկրետ ազգպետությունում հավասարակշռված քաղաքական իշխանության լեգիտիմության ապահովման համար: Այսպիսով, ստեղծվում է մի իրավիճակ, որտեղ մեկը մյուսին փոխպայմանավորում են և գտնվում են դիալեկտիկական միասնության մեջ: Այստեղ խոսքն այն մասին է, որ որևէ քաղաքական համա-

⁸ Այդ մասին մանրամասն տե՛ս «Права человека. Сборник международных договоров» ООН, 1994, т. 1, ч. 1—2 և այլն:

կարգի գործառնության ձևը ապահովող քաղաքական ուժերը դադարում է լինել միայն տվյալ համակարգի քաղաքական ուժերը, քանի որ վերջինս կրթում է ցիվիլիարխիկ կամ ոչ ցիվիլիարխիկ (անտիցիվիլիարխիկ) ազդեցություններ: Օրինակ՝ Հայաստանում ժողովրդավարական քաղաքական ուժերի կայացումը զգալիորեն կախված է նաև ՄԱԿ-ի, Եվրոխորհրդի, այսինքն՝ միջազգային հանրության կարծիքից: Հենց այն ինստիտուտները, որոնք ապահովում են վերոհիշյալ քաղաքական համակարգի գործառնության ձևը, կոչվում են ցիվիլիարխիա:

Այստեղ տեղին է ընդգծել Հ. Գևորգյանի այն միտքը, որի համաձայն «լեզվաէթնոլոգիական մշակութային տարբեր խմբերը (ազգագրական, էթնիկական մշակույթները) երկար ժամանակ գոյակցում են, մինչև որ հասարակության պետաիրավական կազմակերպման համընդհանրական ձևերի շնորհիվ կազմավորում է մշակույթի վերին՝ քաղաքակրթական էլիտար շերտը, որն էլ հենց դառնում է նոր ազգի համընդհանուր ազգային մշակույթը»⁹: Այս իմաստով ցիվիլիարխիան քաղաքական այնպիսի կառույց է, որն ապահովում է համաշխարհային և ազգային քաղաքացիական հասարակության քաղաքական համակարգի հավասարակշռված գործառնության, համընդհանուր ու առանձնահատուկ կազմակերպման ձևերը:

А. С. АЛЕКСАНИАН — Эпоха цивилиархии. — В современных политических учениях если не основной, то центральной проблемой остается изучение возможных моделей взаимоотношения и взаимодействия наций-государств, национальной идентичности, особенности с наднациональными институтами.

В политологии в ряду уже существующих традиционно политических систем, режимов и легитимности политической власти появляются качественно новые разновидности, к числу которых можно отнести и цивилиархию.

В современном гражданском обществе, многонациональном мире происходящее мировое развитие, модернизация, глобализация выдвигают различные проблемы и предпосылки, а также новейшие тенденции к изучению наднациональных и национальных политических систем и режимов.

Цивилиархия — это способ функционирования политической системы мирового сообщества, которое пытается с помощью демократических механизмов укрепить, преодолеть и развить в нациях-государствах низшие и верхние пределы цивилизованного существования, создавая таким образом необходимые предпосылки формирования гражданского общества.

Цивилиархия в этом является политическим институтом, который обеспечивает сбалансированное функционирование политической системы всемирного и национального гражданских обществ.

⁹ Հ. Պ. Գևորգյան, Ազգ, ազգային պետություն, ազգային մշակույթ, Երևան, 1997, էջ 55.